# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Բագրատ Բադալյանի 2019 թվականի հունիսի 20-ից 22-ը Իսպանիայի Թագավորություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Բագրատ Բադալյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   2019 թվականի հունիսի 20-ից 22-ը Իսպանիայի Թագավորություն (Բարսելոնա)

4. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ-1-ի և Տրանշ-2-ի իսպանական կապալառուի ներկայացուցիչների հետ հանդիպմանը

5. **Քննարկված թեմաները**

   Կապալառու կազմակերպություն՝ Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ-1-ի և Տրանշ-2-ի շրջանակներում համապատասխանաբար Երևան-Արտաշատ, Երևան-Աշտարակ և Աշտարակ-Թալին ճանապարհահատվածների կառուցման պայմանագրի (T1-T2-CW-01) ընթացքը, դրա կարգավիճակը և հեռանկարները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Հանդիպման ընթացքում քննարկվել են ենթակապալառուներին ունեցած պարտքերի հնարավոր վճարումը Կապալառուի կողմից: Կապալառուի կողմից վճարումների կատարման անհնարինության պարագայում ՀՀ կողմից ենթապայմանագրի վճարման պայմանները և դրանից բխող Կապալառուի

պարտավորությունները: Ինչպես նաև պայմանագրի հնարավոր երկարաձգումը և դրանից կախված նախապայմանները, ՀՀ կողմի նախապայմանները և պահանջները: Քննարկվել է նաև պայմանագրի հնարավոր խզման տարբերակները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում Կապալառուն պարտավորվել է առավելագույնը 1-2 շաբաթվա ընթացքում Ծրագրի կառավարման խորհրդատու/Ինժեների հետ համատեղ իրականացնել, հստակեցնել և ավարտին հասցնել Տրանշ-1-ի և Տրանշ-2-ի բոլոր կատարված աշխատանքների ծավալները և ներկայացնել Պատվիրատուին:

Հանդիպման ընթացքում արձանագրվել է Պատվիրատուի դիրքորոշումը բարձրացված հարցերի վերաբերյալ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Կապալառուն պարտավորվել է 1-2 շաբաթվա ընթացքում իր ներկայացուցիչ Դավիթ Ռոդրիգեսի գլխավորությամբ իրականացնել, հստակեցնել և ավարտին հասցնել Տրանշ-1-ի և Տրանշ-2-ի բոլոր կատարված աշխատանքների ծավալները և ներկայացնել Պատվիրատուին, որից հետո կիրականացվեն նաև լրացուցիչ աշխատանքների կատարման համար առաջարկված Փոփոխման հրահանգները:

Նշված աշխատանքների կատարումից հետո կքննարկվի հետագա քայլերի կատարման ընթացքը և ժամանակացույցը:

9. **Գործուղվողը**

Բագրատ Բաղալյան

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

27.06.2019թ.